ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատ կոնդակով փետրուար ամսին

«**Ս. Սահակ-Ս. Մեսրոպ**» շքանշանով պարգեւատրուել է.
Ջաւէն Գրիգորեան (Հունապանի թեմ)

«**Ս. Ներսէս Շնորհալի**» շքանշանով պարգեւատրուել են.
Գարուն Միրզոյեան (Կոտայքի թեմ)
Վլադիմիր Գասպարեան (Կոտայքի թեմ)

ԹԵՄԻՍ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԸ «ԻՐԱՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ» ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2010-ի Փետրուարի 9-ին եկեղեցական կազմակերպութիւն մը հիմնուեցաւ «Իրաքի քրիստոնեայ համայնքապետերու խորհուրդ» անուան տակ, որը կը բաղկանայ պետութեան կողմէ պաշտօնապէս ճանչցուած 14 Քրիստոնեայ համայնքներու կրօնապետերէ՝կազմելով 28 առաջնորդութիւն եւ եկեղեցական համայնք:

Խորհուրդին նպատակն է ուսումնասիրել այդ եկեղեցիներու եւ հավատացեալներու հետ կապուած հարցերը՝անոնց բարգաւաճութեան եւ բարելաման համար, ինչպէս նաեւ հաւատացեալներու հոգիներէն ներս զորացնել Քրիստոնէական պատկանելութիւնը, մանաւանդ երբ Իրաքեան հայրենիքը կը տառապի քաղաքական, տնտեսական եւ անապահովութեան վիճակներէն, որուն առ ի հետեւանք հարիւրաւոր Քրիստոնեայ ընտանիքներ արտագաղթեցին եւ տակաւին կ՚արտագաղթեն աւելի ապահով երկիրներու տակ ապրելու՝ թողնելով իրենց տունն ու տեղը:

Վերոհիշեալ օրը, բարձրասրտիճան առաջնորդներ եւ եպիսկոպոսներ վաւերացուցին այս առթիւ խմբագրուած ներքին կանոնագրութիւնը, որուն մէկ տրամադրութեան հիման վրայ նորակազմ խորհուրդի ընդհանուր քարտուղարի ու վարիչ մարմինի ընտրութիւն կատարուեցաւ: Ժողովականները միաձայնութեամբ ընտրեցին թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանը որպէս խորհուրդի ընդհանուր քարտուղար երեք տարուայ ժամանակաշրջանի համար:

Խորհուրդին կ՚անդամակցին երկու պատրիարքներ եւ 26 արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ ու համայնքապետեր:

Կը կարեւորենք յիշել, թէ Գերշ. Տ. Աւագ արքեպիսկոպոսը 2006 թուականի յունիսէն ի վեր վարած էր «Պաղտատի քրիստոնեայ համայնքապետերու խորհուրդ»-ի ընդհանուր քարտուղարի պաշտօնը եւ միաձայնութեամբ վերընտրուած էր երկրորդ շրջանի համար 2009 թուականի յունիսին:

ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ
ՊԱՂՏԱՏ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԳԵՂԱՐԴ ԱԲԵՂԱ ՎԱՀՈՒՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Գեղարդ աբեղա Վահունին՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին խնդրագրի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Վահե Վահունի:

ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՎԵՑԻՆ ԹԵՄԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ դեկտեմբերի 13-ին ձեռնադրված նորաօծ քահանաները, ավարտելով իրենց քառասնօրյա պահեցողության շրջանը, ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում:

Տ. Վազգեն քհն. Հովհաննիսյանը հոգեւոր սպասավորության է նշանակվել Սյունյաց թեմում, Տ. Նաիրի քհն. Գեւորգյանը՝ Հարավային Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Վիգեն քհն. Ղազարյանը՝ Գուգարաց թեմում, Տ. Երվանդ քհն. Բաբայանը՝ Խոր Վիրապի վանքում, Տ. Եղիշե քհն. Նազարյանը՝ Շիրակի թեմում, Տ. Աշոտ քհն. Սաֆարյանը՝ Արարատյան հայրապետական թեմում, Տ. Միքայել քհն. Նուրիջանյանը՝ Արարատյան հայրապետական թեմում:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԻՐ ՊԱՇՏՈՆԸ

Փետրվարի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը սպանձնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնը:

Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ է ընտրվել 2009 թ. դեկտեմբերին գումարված Բրիտանահայ համայնքային եւ եկեղեցական խորհրդի ժողովի ընթացքում: Առաջնորդի ընտրությունը հաստատվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությամբ:

Վերջին տարիներին Հայր Վահանը ծառայում էր ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցում իբրեւ հոգեւոր հովիվ:

***

Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը (ավազանի անունը՝ Սարգիս) ծնվել է 1963 թ. Բաղդադում:

1988 թ., ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, ձեռնադրվել է սարկավագ եւ մեկնել ԱՄՆ՝ ուսումը շարունակելու Նյու Յորքի Ս. Վլադիմիր

աստվածաբանական ճեմարանում:

1990 թ., ձեռամբ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1995 թ. պաշտպանելով վարդապետական ատենախոսությունը՝ ստացել է մասնավոր վարդապետության առաջին չորս աստիճանները՝ ձեռամբ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի:

2006 թ. ստացել է ծայրագույն վարդապետության աստիճան՝ պաշտպանելով ատենախոսություն «Գ. Կորնթացիս թուղթը» թեմայով:

Այս տարիներին որպես հոգևոր հովիվ ծառայել է Նյու Յորքի Ս. Խաչ, Սրբոց Նահատակաց եւ Նյու Ջերսիի Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցիներում: Որոշ ժամանակ եղել է Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցու լուսարարապետը:

Ֆորդհեմ համալսարանից ստացել է աստվածաշնչագիտության դոկտորի աստիճան:

ԱՊՀ ԵՒ ԲԱԼԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Փետրվարի 4-ին Մոսկվայում տեղի ունեցավ ԱՊՀ եւ Բալթյան երկրների Քրիստոնեական Միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի քարտուղարության նիստ՝ «Քրիստոնեական ընտանիքը՝ «փոքր եկեղեցի» եւ առողջ հասարակության հիմք» թեմայով: Նիստի ընթացքում քննարկման օրակարգային հարցերն էին՝ «Ընտանիքի քրիստոնեական ըմբռնումը, ընտանիքի կազմումն արդի պայմաններում», «Խառնամուսնություններ. քրիստոնեական Եկեղեցիների փորձառությունը» եւ «Հայրություն եւ մայրություն» թեմաները:

Նիստի բոլոր մասնակիցները միանշանակ հաստատեցին, որ քրիստոնեական բարոյականության տեսակետից անթույլատրելի են համասեռամոլությունը, ամուսնալուծությունները, արտամուսնական սեռական հարաբերությունները, աբորտները, էվթանազիան եւ այլն: Քննարկվեց նաեւ խառնամուսնությունների հարցը: Նիստի վերջում ընդունվեց ամփոփիչ փաստաթուղթ, որտեղ անդրադարձ է կատարվում ժամանակակից հասարակության մեջ տեղ գտած քրիստոնեական բարոյականության մարտահրավերներին:

Այս նիստին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, ով հանդես եկավ «Խառնամուսնություններ. քրիստոնեական Եկեղեցիների փորձառությունը» թեմայով զեկույցով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ

Փետրվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Սրբոց Վարդանանց տոնի առիթով մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Գեորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը:

Քարոզի ընթացքին անդրադառնալով Սուրբ Վարդանանց նահատակության խորհրդին՝ պատարագիչ Սրբազանը մասնավորապես նշեց. «Չվախենանք նրանցից, որ կարող են մարմինը սպանել: Հոգին սպանելն անհնարին է: Մարդիկ իրար սպանում են զանազան պատճառներով եւ ակնկալիքներով, եւ ամբողջ պատմության ընթացքին երեւում է մարդու ըմբոստ ոգին՝ սեփական ազատությունն ու իրավունքները պաշտպանելուն ի խնդիր: Նույնը եղավ նաեւ Վարդանանց պարագային, երբ մի ամբողջ ազգ ոտքի ելավ իր իսկ կամավորաբար ընդունած հավատքը պաշտպանելու նրանցից, ովքեր նպատակ ունեին զրկել վերջինիս սեփական հավատքն ունենալու եւ ազատորեն պաշտելու իրավունքից: ...Վարդանանց պատերազմն ավարտված չէ, շարունակվում է նաեւ այսօր, շարունակվում է բոլոր նրանց դեմ, ովքեր ուզում են վերացնել մեր ազգի ոգին՝ Հայոց Եկեղեցին: Եւ այդ շարունակվող պատերազմի ընթացքին յուրաքանչյուրս պարտականություն ունենք մեզ համարելու եւ զգալու իբրեւ Վարդանանց հետեւորդներ, քաջ Վարդանի զինվորներ...»:

Սրբոց Վարդանանց օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնը: Այս առիթով հավարտ Սուրբ Պատարագի Մայր Տաճարում հանդիսավոր կերպով կատարվեց Հայրապետական մաղթանք: Մայր Աթոռի միաբաններն ու բարեպաշտ ժողովուրդը աղոթք ուղղեցին Բարձրյալ Տիրոջը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության, Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության եւ խաղաղ ու բեղուն հայրապետության համար:

Նույն օրը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նախագահությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի: Վարդանանց հերոսամարտի մասին բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի դասախոս Դավիթ Գյուրջինյանը՝ ներկաների ուշադրությունը վերստին սեւեռելով Վարդանանց կատարած գործի եւ ոգու վրա: Տոնին նվիրված շարականների եւ հայրենասիրական երգերի կատարումներով ելույթ ունեցան ճեմարանի սաները:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շուքով տոնախմբեց Տյառնընդառաջը՝ 40-օրյա մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին:

Տոնի նախօրեին՝ փետրվարի 13-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում երեկոյան ժամերգության ավարտին հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց նախատոնակի արարողություն եւ անդաստանի կարգ, որով հավատացյալ ժողովրդին ազդարարվեց Տյառնընդառաջի տոնի սկիզբը: Այնուհետեւ Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի կանթեղից բոցավառված մոմով Ամենայն Հայոց Հայրապետը վառեց Մայր Աթոռի շրջափակում պատրաստված Տյառնընդառաջի ավանդական կրակը:

Մայր Աթոռի միաբանները եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով՝ բաշխելով ներկա բարեպաշտ ժողովրդին Քրիստոսի խորհրդանիշ լույսը:

Փետրվարի 14-ին տոնի առիթով Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ:

Դպրարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Մայր Աթոռի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Հայորդյաց տների տնօրեն Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: Իր քարոզում Հոգեշնորհ Հայր Սուրբն անդրադարձավ այս տարի զուգադիպող Տյառնընդառաջի և Բուն Բարեկենդանի տոների խորհուրդներին և վերջիններիս արտացոլմանն ազգային բանահյուսության մեջ:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց արդեն ավանդույթ դարձած նորապսակ զույգերի օրհնության կարգը: Արարողությանը ներկա նորապսակներին Նորին Սրբությունը նաև նվերներ հանձնեց:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՆՈՐՎԱՆ ԱՐՔԵՊՍ. ԶԱՔԱՐԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀՈԼԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ

19 փետրուար 2010 թ. ժամը 19:00-ին Հոլանտայի Ալմելօ քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Խաղաղական եւ Հանգստեան (հսկումի) ժամերգութիւն, որուն կը նախագահէր Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ Բարձ. Տ. Նորվան արքեպս. Զաքարեան: Այս առթիւ ներկայ էր նաեւ Պէնէլիւքսի հայրապետական պատուիրակի փոխանորդ Հոգշ. Տ. Զատիկ վրդ. Աւետիքեանը:

Ժամերգութեան աւարտին Հոլանտայի հայոց հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Տաթեւ վրդ. Յակոբեանը, իր խօսքը ուղղելով ներկաներուն, նշեց, թէ մեծ ուրախութիւն է համայն հոլանտահայութեան համար, վայելելու ներկայութիւնը Բարձրաշնորհ Սրբազան Հօր եւ Հոգեշնորհ Հայր Սուրբին: Ապա ապեան հրաւիրեց Սրբազան Հայրը, որպէսզի տայ իր պատգամը:

Սրբազան Հայրը նոյն ատեն հանգամանօրէն ներկայացուց Հոգշ. Տ. Զատիկ վրդ. Աւետիքեանը որպէս հայրապետական պատուիրակի փոխանորդ Պէնէլիւքսի եւ ապա անդրադարձաւ Պէնէլիւքսի երկրներու հայութեան ներկայ վիճակին՝ շեշտը դնելով մասնաւորապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նպատակին ու ծրագրին վրայ՝ մօտակայ ժամանակներու մէջ ստեղծելու Պէնէլիւքսի երկիրներուն համար թեմական կառոյց:

Իր խօսքի աւարտին Սրբազան Հայրը հրաւիրեց Հայր Զատիկը տալու համար իր առաջին պատգամը հոլանտայի հայ հաւատացեալներուն: Հայր Սուրբն իր քարոզին մէջ նշեց մեծ պահքի կարեւորութիւնը եւ ապա յայտնեց իր պատրաստակամութիւնը՝ ամբողջական ծառայութիւնը բերելու Պէնէլիւքսի երկրներու հայութեան, ի փառս Քրիստոսի եւ ի պածառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Ժամերգութեան աւարտին տեղի ունեցաւ խորհրդակցական հաւաք, նախագահութեամբ Նորվան Սրբազանի, ներկայութեամբ Հայր Զատիկի, Հայր Տաթեւի եւ Հոլանտայի հայոց եօթ ծխական խորհուրդներու վարչականներուն: Սրբազան Հօր կողմէ անգամ մը եւս շեշտը դրուեցաւ թեմական կառոյցի կարեւորութեան եւ հրամայականին վրայ, յանուն Պէնէլիւքսի երկիրներու հայութեան բարգաւաճման ու գոյատեւման:

ՏԱԹԵՒ ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՆ 90 ԵՎ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

Լրացաւ հոգեւոր-մշակութային գործիչ Պարգեւ Շահբազեանի ծննդեան 90-ամեակը: Նա ծնուել է Կ.Պոլսում 1920 թուականին: Բէյրութում ստացել է բարձրագոյն կրթութիւն՝ հետեւելով Սեն-Ժոզէֆ ֆրանսիական համալսարանում հայագիտութեան բաժնի դասընթացներին: Մասնագէտ է հայոց լեզուի, հայ եւ արեւմտաեւրոպական գրականութեան: 1946-ին ընտանեօք հայրենադարձուել ու բնակութիւն է հաստատել Երեւանում: Մ. Գորկու անուան միջնակարգ դպրոցում դասաւանդել է ֆրանսերէն եւ հեղինակել ֆրանսերէն լեզուի դասագրքերի շարք՝ Հայաստանի միջնակարգ դպրոցների համար: Վազգէն Ա Վեհափառը 1956-ին նրան հրաւիրել է Մայր Աթոռ՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանում դասաւանդելու հայոց լեզու եւ գրականութիւն արեւմտաեւրոպական գրականութեան պատմութիւն: 40 տարի նա եղել է Ամենայն Հայոց Հայրապետի աշխարհական մերձաւորներից՝ բերելով նրան իր բոլորանուէր ծառայութիւնը որպէս թարգմանիչ, գիտական քարտուղար: Աւելի քան 25 տարի Գերագոյն հոգեւոր խորհրդի ատենադպիրի պաշտօնն է վարել, Հայոց Հայրապետին ուղեկցել հայրապետական բազմաթիւ ուղեւորութիւնների ժամանակ՝ հետագայում կազմելով Վեհափառի արտասահմանեան ուղեւորութիւնների մի քանի ծաւալուն հատորներ: Եղել է Մայր Աթոռի հրատարակած Նոր Կտակարանի արեւելահայերէն եւ արեւմտահայերէն նոր թարգմանութեան երեք համահեղինակներից մէկը, նաեւ 1990-ական թուականների սկզբին խմբագրել է «Աստուածաշունչ մատեան»-ի ամբողջական թարգմանութիւնն արեւելահայ գրական լեզուով: 1978 թ. դեկտեմբերի 3-ին Վազգէն Ա Վեհափառը, գնահատելով Հայ Եկեղեցուն եւ Մայր Աթոռին մատուցած նրա բազում եւ բազմաբնոյթ ծառայութիւնները, բազմավաստակ դասախօսին եւ Ս. Էջմիածնի միջեկեղեցական յարաբերութիւնների բաժանմունքի ընդհանուր քարտուղարին, իր սրբատառ կոնդակով շնորհել է Վասպուրական դասախօսի կոչում՝ այդ առթիւ պարգեւատրելով «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» հայրապետական բարձր շքանշանով:

Մայր Աթոռի ներկայ գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գէորգեան ճեմարանի հիմնադրման 130-ամեակի առթիւ Պ. Շահբազեանին պարգեւատրել է «Ս. Ներսէս Շնորհալի» հայրապետական շքանշանով, իսկ նրա ծննդեան 90-ամեակի առթիւ ջերմագին շնորհաւորանքներ է յղել «Օրհնութեան գրով»:

Իր բեղմնաւոր գործունէութեանն առընթեր՝ Պ. Շահբազեանը թարգմանել է ֆրանսիական դասականներից Բալզակի, Բոդլերի Ռեմբոյի, Մոպասանի եւ այլոց գործերը: 1991-ին նրա թարգմանութեամբ Մայր Աթոռի տպարանում լոյս տեսաւ ֆրանսիացի ժամանակակից յայտնի ատուածաբան Միշէլ Քենելի «Ինչպե՞ս կարդալ Աւետարանը» մեկնողական աշխատութիւնն առանձին հատորով: Վերջին տարիներին Պ. Շահբազեանի ոսկեղենիկ հայերէնով գեղեցիկ թարգմանութեամբ լոյս տեսան հանրաճանաչ գրող Շատոբրիանի «Քրիստոնեութեան հանճարը» գրքից քաղուած հատընտիրը, «Ատալա», «Ռընէ» վիպակները, Գրիգոր Նիւսացու «Մովսէսի կեանքը», «Հաւատի քրիստոնէականը», Որոգինէսի «Մեկնութիւն աղօթքի» աշխատութիւնների նրա թարգմանութիւնները, ֆրանսագիր հայ գրողներ Վահէ Քաջայի «Դեւը արթնացաւ» եւ Անրի Թրուայայի (անդամ ֆրանսիական ակադեմիայի) «Սարդը» վէպերը, Շառլ Բոդլերի «Փարիզեան ձանձրախտ» բանաստեղծութիւնների շարքը, 2008-ին՝ նրա յօդուածների,

ելոյթների, գրախօսականների, թարգմանութիւնների «Մատեան երախտիքի» ժողովածուն, 2010-ին՝ ժամանակակից ֆրանսիացի պատմաբան Ֆիլիպ Վիդալիեի «Թուրքական գիշեր» գիրքը, որ նուիրուած է աբդուլհամիդեան շրջանի եւ Մեծ եղեռնի պատմութեանը: Գրքի առաջաբանում պատմական գիտութիւնների դոկտոր, ակադեմիկոս Մանուէլ Զուլալեանը գրում է. «….հմուտ ու մեծարժէք հայերէն թարգմանությունը…., ինչպէս որ անցեալում կատարած նրա միւս թարգմանութիւնները վկայում են, որ թարգմանիչը կատարելապէս տիրապետում է ֆրանսերէնին եւ նրա արտահայտչամիջոցների բոլոր նրբերանգներին: Նոյնը կարելի է ասել թարգմանչի հայերէնի գերազանց իմացութեան մասին»:

Պ. Շահբազեանն ունի նաեւ անտիպ թարգմանութիւններ հանրաճանաչ գրող Անդրէ Ժիդի «Հովուական համանուագ» եւ Ռոմեն Ռոլանի «Բեթհովենի կեանքը» գործերը: Ներկայումս ֆրանսերէն է թարգմանում ԺԸ դարի հայ մատենագիր եւ Հայոց Կաթողիկոս Սիէօն Երեւանցու «Աղօթագիրքը»:

Լոս-Անջելեսում 5 տարի առաջ իր մեծարման երեկոյին հոբելեար Պարգեւ Շահբազեանը բանաւոր ելոյթում ասաց. «Որպէս բազմամեայ մշակ իմ կեանքի վերջալոյսին յաճախ նոյն հարցումն ուղղած եմ ինձի. «…ի՞նչ մնաց, կեանքէն ինձի ի՞նչ մնաց. Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, այն միայն»: Այդպէս, ինչ որ տուած եմ իմ սաներուն, ինչ որ բաշխած եմ անոնց երկար տարիներ մեծ սիրով եւ անհաշիւ, ա՛յդ մնացած է միայն ինձի, միմիայն այդ: «Ինչ որ գնաց ուրիշին, վերադարձաւ անուշցած ու զօրացած հոգիիս մէջ մնալու յաւիտեան»:

Այդպէս եղած է նաեւ իմ պարագայիս. Ինչ որ գացած է ինձմէ իմ հազարաւոր աշակերտներուս եւ ուսանողներուս իբրեւ գիտելիք, իբրեւ մայրենի լեզու, իբրեւ սէր, նուիրում, շունչ ու ոգի, այդ բոլորը չէ կորսնցուցած Ապրուած, այլ վերադարձուցած է ինձի որպէս անկորնչելի, աննիւթական հարստութիւն, գերազանցապէս հոգեկան եւ ատով իսկ՝ թանկագին եւ անփոխարինելի: Ա՛յդ եղած է հատուցումը իմ ծառայողական ամբողջ կեանքիս, այլ խօսքով՝ իմ ծառայութիւնս, վաստակս իր մէջ իսկ ունի իր վարձատրութիւնը, ինչպէս Աւետարանը կ՚ըսէ՝ «Այդ իսկ են վարձք քո»:

Մնում է բարեմաղթել սիրելի պարոն Պարգեւ Շահբազեանին. «Ո՛ղջ լերուք զորացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ. Ամէն»:

ՍԵԴԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ